

Համարը N 344-Ն
Տիպը Որոշում
Մկգրնաղբյուրը ՀՀՊՏ 2014.04.16/19(1032)
Հոդ. 291

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.04.2014

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 27.03.2014
Ստորագրման ամսաթիվը 03.04.2014
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2014 թվականի N 344-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 1186-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «մարտի» բառը փոխարինել «մայիսի» բառով.

2) որոշման հավելվածում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 11-րդ, 13-րդ, 22-րդ, 24-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 61-րդ, 67-րդ, 76-րդ, 81-րդ, 109-րդ, 113-րդ, 114-րդ, 147-րդ, 160-րդ և 169-րդ կետերը,

բ. 25-րդ կետում «Գալստյան Դավիթ» բառերը փոխարինել «Կոշի գյուղական համայնք» բառերով,

գ. 126-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

126.	245-060	Նորիկ Բոզիկյան
------	---------	----------------

 »,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 37.1-ին, 37.2-րդ, 37.3-րդ, 126.1-ին, 126.2-րդ, 126.3-րդ, 126.4-րդ, 126.5-րդ, 126.6-րդ, 126.7-րդ, 135.1-ին, 135.2-րդ և 135.3-րդ կետերով.

«

37.1.	127-010	Դավիթ Գալստյան
37.2.	127-011	Աղվան Դանիելյան

 »:

37.3.	050-025	Կոշի գյուղական համայնք
126.1.	245-061	Հայկ Բոզիկյան, Մանուշակ Հովհաննիսյան, Միսակ Հովհաննիսյան, Մարինե Հովհաննիսյան, Սիրանուշ Հովհաննիսյան
126.2.	245-062	Արսեն Սարգսյան
126.3.	245-063	Վրեժ Ավետիսյան, Ալվարդ Պետրոսյան
126.4.	245-064	Ռինա Սուքիասյան, Ազատ Սուքիասյան, Արթուր Սուքիասյան, Ռոզա Սուքիասյան
126.5.	245-065	Միհրդատ Սարիբեկյան, Լարիսա Սարիբեկյան, Հովհաննես Սարիբեկյան, Ծովիկ Սարիբեկյան, Հասմիկ Սարիբեկյան
126.6.	245-066	Արթուր Խաչատրյան
126.7.	245-067	Ավագ Սիրունյան, Անահիտ Սիրունյան, Նուշիկ Սիրունյան, Վարդուհի Սիրունյան, Տաթևիկ Սիրունյան, Նորիկ Սիրունյան
135.1.	229-002	Սարգիս Աբրահամյան
135.2.	233-01 (223-010)	Վարուժան Կիրակոսյան
135.3.	224-016	Գևորգ Ղուկասյան (Սիրանուշ Դավթյան)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2014 թ. ապրիլի 3
Երևան